հորիզոնական թևերի եզրաքարերին ձեռքի քանդակներ են՝ կից մակագրություններով: Թեև երկմտելի, բայց հիշատակված են շինարար վարպետները (Սերգի, Պետրոս) և նրանց գործընկեր գրիչը՝ Գուլխանը, որը նաև քանդակների հեղինակն է:

Եկեղեցին շրջապատված է գերեզմանոցով, ուր, թերևս, թաղումներ են արվել Կյուրիկյանների ժամանակներից ի վեր:

ՈՒՌՈՒՏ

1032. ԽԱՉՔԱՐ. ագուցված գյուղից 2 կմ արևմուտք, XIX դ., վերանորոգված մատուռի հյուսիսային պատին, մի մասը՝ ջարդված, եզրակողին, 1 տող (XIV դ.):



ԿԱՆԿ Ն ԵՑԻ ԽԱՉՍ ԱՐԳՆԱԿԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ:

Ծանոթ. Պատերին ագուցված են մի քանի խաչքարեր ևս:

ՍՎԵՐԴԼՈՎ

Գյուղը հարուստ է վաղ քրիստոնեական հուշարձաններով: Գյուղի կենտրոնում գտնվում է T-ձև հատակագծով վաղ քրիստոնեական մի եկեղեցի, իսկ մոտ 1-1,5 կմ հյուսիս-արևելք կանգնած է խաչաձև հատակագծով, այս տեղին ոչ բնորոշ մեծության կենտրոնագմբեթ Ս. Աստվածածին եկեղեցին, որը մասնագետների կողմից մերթ համարվել է VII դարի եզակի նմուշ,[100] մերթ էլ, ելնելով եռախորան հատակագծային հորինվածքի և դեկորատիվ տարրերի յուրահատկություններից՝ VIդ. առաջին կեսով, որն ավելի հավանական է: Տեղացիների կողմից կոչվում է Դորբանդավանք:

Այս հուշարձանից մոտ 700 մ արևելք գոյություն ունի թաղածածկ մատուռ՝ բավականին խորն ընկած բեմական խորանով և երկու կողմերում տեղավորված ավանդատներով:

Մի թաղածածկ մատուռ էլ գտնվում է գյուղի հյուսիսակողմում, բլուրի վրա՝ բազմաթիվ նորոգումների հետքերով:

Երկու ուշ միջնադարյան արձանագրություններ կան գյուղամիջի հնագույն եկեղեցու վրա:

1033. ԵԿԵՂԵՑԻ. հարավային մուտքի արևելյան որմնասյան խոյակին. 3 տող.

ԵՍ՝ ՈՍԿԱՆ-
Ս ԳՐԵՑԻ Թ-
Վ[ԻՆ] ՌՂ (1641):

---

[100] *С.Х. Мнацаканян.* Об одном неизвестном типе сооружений древнеармянской архитектуры. «Տեղեկագիր» հաս. գիտ., 1952, N 7, էջ 95-106. *Վ. Գրիգորյան,* Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ հուշարձանները, Եր., 1982, էջ 28-29:

1034. ԵԿԵՂԵՑԻ. Նախորդի մոտ, 3 տող.

ԵՍ՝ ՆԻԱՁ-
Ս ԳՐԵՑԻ
ԹՎ[ԻՆ] ՌՃ (1651):

1035. Ս. ՍԱՐԳԻՍ ՄԱՏՈՒՌ. հարավային մուտքի ճակատաքարին, 2 տող.



ՇԻՆԵՑԱՅ Ա[ՍՏՈՒԱ]ԾԻՆ...

Ծանոթ. Մատուռը գյուղի հյուսիսակողմի բարձունքի վրա է, շինված կապտակոփ քարով, նորոգված քանիցս: Կիսաշրջան բարավորը դեղնավուն քար է, անավարտ արձանագրության տառերը լավ չեն երևում, թեև գրերը պարզ ու գեղագիր են: Պարզվում է, սակայն, որ տեղացիների կողմից Ս. Սարգիս կոչվող մատուռն իրականում նվիրված է Մարիամ Աստվածածնին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ

Գտնվում է Ձորագետ և Միսխանա գետերի խառնարանի եռանկյունաձև բարձրադիր հարթակի վրա: Գետանցող կամուրջներով ապահովվել է քաղաքի ելք ու մուտքը, ճանապարհային կապը: Ինչպես արդեն նշվեց, այս բերդաքաղաքը արքունիքի նստոց է դարձրել Դավիթ Անհողինի որդին՝ Կիւրիկէ Ա: Սակայն բերդի կառուցումը տեղի է ունեցել ավելի վաղ և վերագրվում է Դավիթ Անհողինին (Բարձրաբերդցի, 142). գտնվելով առևտրական ճանապարհների վրա, քաղաքը բուռն վերելք ապրեց ԺԱ-ԺԳ դարերում՝ դառնալով Գուգարաց աշխարհի ռազմական ու վարչաքաղաքական կենտրոնը:

Ներկայումս բերդի տարածքում պահպանվել են բերդապարիսպների երկու շերտերը՝ ավելի քան հարյուր մետր երկարությամբ և ավելի քան քսան մետր բարձրությամբ,[101] բաղնիքի շենքը, ուղղանկյուն մի շենք, որը, ենթադրում են, ծառայել է իբրև եկեղեցի: Այս շինությունների վրա արձանագրություններ չեն փորագրվել. վիմական վկայագրեր կարելի է հանդիպել ինչպես ամրոցում, այնպես էլ նրա մոտ գտնվող հին գերեզմանատանը, որտեղ կան մեծ քանակությամբ խաչքարերի պատվանդաններ:

1036. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ. գերեզմանոցում, 5 տող.



---

[101] *Գ. Շախկյան,* Լոռի, էջ19-20: